Ու՞մն է մայրենին

Աչքս բացեմ՝ մայրենին է: Ահա դուրս թռավ ժպիտների միջից, բարձրացավ երկինք ու Աստծուն հասցրեց հայրիկի «փառքդ շատ»-ն ու մայրիկի «Աստված պահապան»-ը, տատիկի «Աստծու ծեռը վրիդ կենա»-ն ու պապիկի «Աստոծ հորով-մորով անի»-ն: Աստծուն դուր եկան օրհնանքները՝ այնքան պարզ և իղձերով այնքան տարողունակ: Նրան հետաքրքրեց՝ այս ինչ լեզու է, որի ամեն բառն իր մեջ Աստծուն ունի, որով խոսողը բարձրացրած թասի հետ վերև է առաքում իր բոլոր խնդրանքները, բայց և հավելում՝ շատ չհամարվի: Նա տեսնում է այբուբենը, որում ամեն տառ աղոթքի մի-մի բառ է, անգամ նրանց դասավորության մեջ գտնում իրեն ու իր զավակին: Աստծու ականջին են հասնում մարդու խոհերը, նա կարդում է այդ գեղեցիկ բառերի հյուսվածքը, հիանում հնչյունների ներդաշնակ շարքերով և հանկարծ այդտեղ գտնում իրեն: Բայց այդ աղոթքը մի տեսակ անծանոթ էր իրեն: Ու հասկացավ, որ այդ լեզուն ինքը աղոթք է, որ տխրության պահին հույսի ու փարատման, ուրախության պահին՝ երախտիքի ու գոհության բառերով է հնչում:

Եվ Աստված սիրեց այս լեզուն, նրա անուշ հնչումն ու մաքառման զորությունը: Ու Նրան հետաքրքրեց՝ ումն է այդ լեզուն:

Ես ասե՞մ: Ի՛մն է: Առաջին բառիս հետ ես ու մայրենին երդում կապեցինք. «Արի՛՝ խոստանանք իրար. ես կպահպանեմ քեզ, աշխարհին ցույց կտամ ով լինելդ, միայն թե դու էլ ինձ պահես, փայփայես»,- ասաց նա ու ձեռքը մեկնեց ինձ:

Գրչիս տակ թանաքով հոսում է ինքնությունս, տառերը դառնում են բառեր, բառերից ամեն մեկը՝ խորախորհուրդ մի աշխարհ, ինչպես մեր Մեծ պապիկը կասեր: Սա այն լեզուն է, որ խմբում է իր հնչյուններին, նայում է օրիորդին ու նրան կոչում «սիրուն», «աննման», «նուրբ», «հեզիկ-նազիկ», «գեղաչյա», «չքնաղ», նայում է այս օրիորդով հիացող տղային ու կոչում «ուժեղ», «խիզախ», «տոկուն», «քաջ», նայում է շուրջը տարածվող բնությանն ու լեռներին ասում «վիթխարի», ձորերին՝ «խորունկ», ջրերին՝ «քչքչան», «հանդարտահոս», ապա նայում է ապրող ժողովրդին ու ասում «իմաստուն», «մաքառող», «հպարտ», «անկոտրում»: Նա գիտի ներշնչվել ու գիտի ինչպես անվանել ում կամ ինչը: Նա անողոք է վատի հանդեպ, նրան «թշվառական», «հիմար» է անվանում, «գոռոզ» կամ «ընչաքաղց», «չար» կամ էլ «ստահակ»: Նույն հնչյուններն են, բայց նրանք գիտեն և՛ մեղմ խոսել, և՛ բիրտ կշտամբել: Նա չի սիրում,

երբ իրեն աղավաղում են, չի սիրում, որ հանկարծ թափթփված բառակույտ է դառնում ու սխալներով արտաբերվում: Հապա երդու՞մը:

Սա նույն մայրենի լեզուն է, բայց ինչքա՜ն հպարտ է հնչում հայրենիքի պաշտպանի երդման վայրկյանին, ջան-ջիգյարով է հնչում բեղերը ոլորող գյուղացու շուրթերից և դառնում կենաց՝ կյանքի խոսք, ապա մեղմանում է, մանչուկին օրորող մայրիկի շուրթերին դառնում քնաբեր շշուկ, հետո էլ շիկնում սիրահարբած տղայի պես ու, չգիտես ինչու, հանկարծ կարկամում, բայց հետո ուժ է հավաքում ու հավիտենական սիրո երդում է հնչեցնում:

Մայրենի լեզուն ամենքինս է, նրա ուզածը մեզնից մեծ բան չէ. սիրել նրան, ճանաչել նրան ու պահպանել, գրագետ հնչեցնել: Թե ամենքս մեր խոստման տերը եղանք, նա էլ իր խոստումը կկատարի. մեզ հայ կպահի:

Գոհար Մխիթարյան

«ՀԼԳ» 3-րդ կուրս